Անդաստան

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՛ւն թող ըլլա...
Ո՛չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին.
Ու երբ հնչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությո՛ւն թող ըլլա:

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությո՛ւն թող ըլլա...
Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Ծիլ ու ծաղի՛կ թող ըլլա:

Հյուսիսային կողմն աշխարհի
Առատություն թող ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝
Բերկրությո՛ւն թող ըլլա:

Հարավային կողմն աշխարհի
Պտղաբերում թող ըլլա...
Ծաղկի՛ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՛ւն թող ըլլա:

«Երկնքի լույս Թուխ – մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները: Աստված օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Մովսեսի տապանակով, Քրիստոսի Սուրբ Խաչով, Աստվածածնի արցունքով, Լուսավորչի լույս հավատով, Հաց ու գինի, Տեր կենդանի: Մեր այգիներն էլ միշտ պիտի առատ լինեն, ողկույզները՝ միշտ անսպառ»:

- Էս մի ճութը հողի պաշտպան հրեշտակին,
- Էս մի ճութը թռչուններին,
- Էս մի ճութը մուկ-մորեխին,
- Էս մի ճութը որբին ու աղքատին,
- Էս մի ճութը անցորդին,

- Էս մի ճութն էլ Արեգակին, Լուսնյակին, Լուսաստղին...

Շարունակվում է ճութերի բաշխումը.

- Էս մի ճութը կրթահամալիրի հիմնադիր տնօրեն տիար Բլեյանին:
- Էս մի ճութը ..... հերթով բաժանում են խաղողը ներկաներին:

Բաղը քաղինք, Երգ ու բան, էջ 121

Բաղը քաղինք, խաղողը տարանք,
Չարազը, չարազը,
Ճառթե՛ք, տըղներ, մաճառ խըմենք,
Ավազը, ավազը:

Խաղողը ճառթենք, կարմիր շիրան
Չրռչրռա, չրռչրռա,
Լըցնենք կարասն, էփի, թափի,
Վըռվըռա, վըռվըռա:

Դե՛, ճառթի, հա՛, դե՛, ճառթի, հա՛,
Կըրընկի, կըրընկի,
Չըփչըփացրու, փըռռա - խաղա
Տըրընգի, տըրընգի:

Խաղողը ճառթի, շիրան հանենք,
Ճըփճըփա, ճըփճըփա,
Մաճառ խմենք ու խաղ կանչենք,
Զըրընգա, զըրընգա:

Քաղենք խաղողը, Երգ ու բան, էջ 117

Քաղենք խաղողը, լըցնենք կողովը,
Ճուր-ճուր, ճուր-ճուր, ճուր-ճուր:

Բե՛ քաղենք սևը, փըռենք արևը,
Շուտ-շուտ, շուտ-շուտ, շուտ-շուտ:

Բե՛ քաղենք խարջին, ծախենք, տանք խարջը,
Ճուր-ճուր, ճուր-ճուր, ճուր-ճուր:

Քաղենք Սաթենին, տանք Սաթենիկին,
Ճութ-ճութ, ճութ-ճութ, ճութ-ճութ:

Քաղենք Նազելին, չըմընա կալին,
Շուտ-շուտ, շուտ-շուտ, շուտ-շուտ:

Քաղենք Արենին, շուտ գըցենք գինին,
Ճութ-ճութ, ճութ-ճութ, ճութ-ճութ:

Փըռենք բոլ չամիչ, ուտենք քիչ ու միչ,
Ճութ-ճութ, ճութ-ճութ, ճութ-ճութ:

Բոլ դոշաբ էփենք, ձմեռը շըփենք,
Շուտ-շուտ, շուտ-շուտ, շուտ-շուտ:

Անենք բոլ կախան, պըրծնի մեր յախան,
Ճութ-ճութ, ճութ-ճութ, ճութ-ճութ:

Խաղող ճմռելու երգ, Երգ ու բան, էջ 123

Իմ յարն իջավ ի էգին, ի էգին,
Օսկի դանակն ի ձեռին, ի ձեռին,
Քաղեց խարջի խաղողն ի էգին,
Ճմռեց օսկի խաղողն ի ձեռին:

Խարջի հավողը ճըմռեմ ի բարին, ի բարին,
Օսկի մաճառը խըմեմ ի բարին, ի բարին,
Չարը ոտի տակ ճըխլեմ, իմ գերին, իմ գերին,
Օսկի գինին խըմեմ իմ գերին, իմ գերին:

Հավող, հավող, քեզ մաճառին կը տամ,
Մաճառ, մաճառ, քեզ գինուն կը տամ,
Գինի, գինի, քեզ հարսանքին կը տամ,
Հարսնիք, հարսնիք, քեզ նորածին,
Նորավոր թագավորին կը տամ:

Ջոջ պասը պասով կը պահեմ,
Ջոջ պասին յարըս ինձնա հեռու կը պահեմ,
Բարին կըրակել կը տամ,

Չարը կըրակին կը տամ,
Աբրեշում մանել կը տամ:

Տո լաո

1. Տո լաո, տո լաո:

Մեկ որ մենք ժողվանք գացինք
Որոշված տեղ ուրախութեն:

2. Տո լաո, տո լաո:

Մեզնից մեկ վերուց ասաց՝
Էկեք չանենք տըղեկութեն:

3. Տո լաո, տո լաո:

Էն գինին, կարմիր գինին
Թող գա ֆռա մըջ մեր գլխին:

4. Տո լաո, տո լաո:

Էն լուսին, պանցրիկ լուսին
Թող շըղշըղա վեր մեր գլխին:

5. Տո լաո, տո լաո:

Էն աստղեր, պեծ – պեծ աստղեր
Թող պսպղա վեր մեր գլխին:
Տո՛, լաո, տո՛, լաո,
Տո լաո, տո լաո:

Դոնիկ, դոնիկ, դոնիկ յար է

Դոնիկ, դոնիկ, դոնիկ յար է,
Հըլեյ դոն, դոնիկ յար:

Մեր տան հիտև քառուն կարաս,
Հըլեյ դոն, դոնիկ յար,
Ձեր տան հիտև քառուն կարաս,
Հըլեյ դոն, դոնիկ յար,
Քառուն կարսի գինին է հաս,
Հըլեյ դոն, դոնիկ յար,
Ամեն կարսեն թասիգ մի տաս,

Հըլեյ դոն, դոնիկ յար,
Ամեն կարսին պագ մը մի տաս,
Հըլեյ դոն, դոնիկ յար,
Թե որ իդաս, դու զորենաս,
Հըլեյ դոն, դոնիկ յար,
Թե որ չիտաս, դու զոթենաս:
Հըլեյ դոն, դոնիկ յար:

Դոնիկ, դոնիկ, դոնիկ յար է,
Հըլեյ դոն, դոնիկ յար:

1. Երգ խնջույքի

Սեղանն է առատ,
Դիմացն Արարատ,
Հնչում են երգեր,
Ուրախ ու զվարթ:

կրկնակ.
Լցնենք ընկերներ,
Բաժակները լի,
Թող հայոց գինին,
Մեզ անուշ լինի:

Փառք տանք մայր հողին,
Արևի շողին,
Գինի պարգևող
Հայոց խաղողին:

կրկնակ.
Լցնենք ընկերներ...

Փառք տանք նոր կյանքին,
Հողի մշակին,
Որ միշտ կանաչեն,
Մեր դաշտն ու այգին:

կրկնակ.

Լցնենք ընկերներ…

Գովենք դարեդար
Աշխարքըն արդար,
Հայոց աշխարհի,
Արևը պայծառ:

2. Հայաստանի Կարմիր Գինին

Խոսք՝ Աշոտ Գրաշու
Երաժ. Արամ Խաչատուրեանի

Գովենք ընկեր, ուրախ սազով,
Հայաստանի կարմիր գինին,
Խմենք ընկեր, ոսկե թասով,
Հայաստանի կարմիր գինին:

կրկնակ.
Աղբյուրի պես վարար լինի
Հայաստանի կարմիր գինին,
Ով որ խմի, անուշ լինի
Հայաստանի կարմիր գինին:

Սարեր, ձորեր մենք զարդարենք
Կանաչ – կարմիր այգիներով,
Կարասները լիքը լցնենք
Հայաստանի կարմիր գինով:

կրկնակ.
Աղբյուրի պես վարար լինի…

Թող երգի պես միշտ կարկաչի
Հայրենիքի ճոխ սեղանին,
Թող վառ շրթով մեզ հյուր կանչի
Հայաստանի կարմիր գինին:

կրկնակ.
Աղբյուրի պես վարար լինի…